

քարշեաց ի բազմակամն (Խոր. 142)»⁽²²⁾։ Սակայն հոս ալ բազմականը կամ բազմականները գորդ կամ գորդեր միայն կը նշանակէ։ Պարսից մօտ, որոնք հայերէն աւելի հարուստ էին, խոշոր գորդեր աւելի հասարակ էին, մինչ հայոց մօտ մանր գորդերը, ինչպէս որ ցարդ գորդագէտներուն անձանօթ է հին կամ նոր մեծածաւալ հայկական (կովկասեան) գորդեր, որոնց մեծագոյնները 7 կամ առաւելն 8 ոտք լայն ալ 15-20 ոտք երկայն կ'ըլլան։ Աւելորդ է ըսել որ մեր մօտ հին ատենները թէ՛ սեղան եւ թէ՛ նստարան այժմու կամ նոյնիսկ այն ատենուան Եւրոպական կամ Բիւզանդական իմաստով գոյութիւն չունէր եւ գործածական չէր ճաշի եւ ալ պարապաներու համար, բացի զըրջութեան եւ եկեղեցական եւ նման ուրիշ սեղմ իմաստով, դահ կամ դահոյք յատուկ էր միայն բարձրաստիճան աշխարհական եւ եկեղեցական մեծերու, այն ալ միայն պաշտօնական հանգամանքով։

Բազմականներուն գորդ ըլլալուն մասին դարձեալ ապացոյց է Յովհաննէս կաթողիկոսի սա վկայութիւնը «կազմուածս բազմականաց կարմրութեամբ որդանայ»։ Այսինքն որդանով ներկուած բազմականներ, գորդեր։ Թովմա Արծրունի ալ կը յիշէ «բազմերանց բազմականը», որուն համար Հ. Հացունի կ'ըսէ «որ կը նշանակեն՝ իմաստի միջնադարեան փոխանակութեամբ մը՝ ծանօթ նստարանաց կամ դահոյից վրայ դրուած բարձր»⁽²³⁾։ Գաղափար մը որ չեմ բաժներ, որովհետեւ արդէն ծանօթ «բարձ» բառին տեղ փոխաբերաբար «բազմական» գործածելու տեղիք չկայ, եթէ «բազմական» «բարձ»էն տարբեր նշանակութիւն չունէր։ Բազմականները կը սփռուէին գահերու վրայ, Ստեփ. Օրբելեան կը վկայէ որ, «նստուցանէին ի վերայ ոսկեթել եւ մարգարտաշար բազմականին»⁽²⁴⁾, որ «արքունական խորանին» այսինքն դահին վրայ փռուած էր։ Ասիկա կը յիշուի նաեւ Պղնձէ Քաղաքին Պատմութեան մէջ, ուր կ'ըսուի. «Եւ գեղեցիկ թաղուհի մը ի վերայ աթոռին նստած, եւ խալիչայ մի բուռ մարգարտով լցած ի ներքեւ թագուհւոյն»⁽²⁵⁾։ Միայն թէ ուսկարարբառ հեքեաթին մէջ խալիի (գորդ) նուագականը խալիչայ (գորդիկ) գործածուած է բազմականին տեղ, որոնց երկուքին ալ պաշտօնը նոյնը եղած է։ Այո՛, գորդեր կան ոսկեթել, արծաթաթել, մարգարտադարդ, գահարահուս, մետաքս, որոնց մասին իրենց կարգին՝ գործիս մէջ։ Ուրեմն այս ճոխ գորդերուն է որ կ'ակնարկուի երբ Ասողիկ կը յիշէ Ալոտ Ողորմածի ծայրահեղ բարեգործութիւնները, ըսելով. «զկա-

(22) Ծաշեր եւ Խնճոյք, էջ 53-4։

(23) Անդ, էջ 54։

(24) Պատ. նահ. Սիսական։ - Հրտ. Կ. Վ. Շահնազարեան, էջ 116։ Պատմիչը կարծես ջանադիր՝ որպէսզի ապագային որեւէ շփոթութիւն տեղի չունենայ բազմականի իմաստին չուրջ՝ կը գրէ. «Իսկ տիկինն Սահակեա ընծայէ նմա զվրանն արքունի ամենայն կահիւքն եւ բազմականօքն»։ (Անդ, էջ 116)։ Ուրեմն այլեւս պարզ է որ բազմականը կահերու, այսինքն կարասիներու հետ կը գործածուէր վրաններու կամ խորաններու մէջ եւ գորդն իսկ էր։

(25) 1792ի հրատարակութիւն, էջ 140։ Իմ մէկ ձեռագրիս մէջ սա տարբերութիւնը ունի. «Եւ խալիչայ մի. ամէն փուռն մարգարիտ էր չարած»։